«Երաշխավորված է»

Տնօրենի՝ ՄԿԱ գծով տեղակալ ________ Ռ. Հասասյան

«31» ____08____ 2023 թ.

«Հաստատված է»

Տնօրեն՝ ________ Գ. Ղարիբյան

«31» ____08____ 2023 թ.

# Դասղեկի տարեկան աշխատանքային պլան

Գավառի Ս. Քոչարյանցի անվան N1 հիմնական դպրոց

9-րդ «բ» դասարան

Դասղեկ՝ Ա. Հովեյան

2023-2024 ուստարի

| Պարտականություն | Խնդիրներ | Գործառույթ | Ժամկետ |
|---|---|---|---|
| Դաստիարակչական աշխատանք է կատարում իր դասարանի սովորողների շրջանում, հայտնաբերում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սովորողի (ընտանիքի) և դրա մասին մեկօրյա<br>ժամկետում տեղեկացնում դպրոցի տնօրենին՝ սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժական աշխատողների հետ: | Սովորողների արժեհամակարգի ձևավորում | Սովորողների մեջ ձևավորել քաղաքացիական պատասխանատվություն և իրավական գիտակցություն, ամրապնդել հոգևոր դաստիարակությունը, զարգացնել նախաձեռնության, ինքնուրույնության, հանդուրժողականության կարողությունները: | տարվա ընթացքում |
| | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սովորողի (ընտանիքի) հայտնաբերում | Ծանոթանալ աշակերտների ընտանիքների հետ՝ կազմակերպելով տնային այցելություններ, անհատական զրույցներ: | սեպտեմբեր |
| | | Ուսումնասիրել երեխաների դրությունը ընտանիքում, նրանց կյանքի պայմանները: | սեպտեմբեր |
| | | Վեր հանել կյանքի դժվարին իրավիճակում (առանց ծնողական խնամքի, սոցիալական անբարենպաստ վիճակ, ...) հայտնված սովորողի (ընտանիքի) խնդիրները և ներկայացնել դպրոցի տնօրենությանը: | սեպտեմբեր |
| | | Կազմել դասարանի սոցիալական քարտեզը: | |
| | | Ապահովել առարկայական ուսուցիչների, հոգեբանի կողմից խորհրդատվության տրամադրումը՝ վեր հանված խնդիրների իրականացման ուղղությամբ: | սեպտեմբեր<br>տարվա ընթացքում |

| Պարտականություն | Խնդիրներ | Գործառույթ | Ժամկետ |
| --- | --- | --- | --- |
| Մասնակցում է իր ղեկավարած դասարանում սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դիտարկմանը, բացահայտմանը, գնահատմանը և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մշակմանը, դրանց ապահովմանը: | Կրթության գործընթացում երեխայի արդյունավետ մասնակցության սահմանափակումների, դրանք առաջացնող միջավայրային գործոնների, ինչպես նաև դրանց հաղթահարման միջոցների բացահայտում | Ղեկավարած դասարանում մասնակցել սովորողի առանձնահատուկ պայմանների կարիքի դպրոցական մակարդակի դիտարկմանը՝ համագործակցելով դպրոցի հոգեբանի, ուսուցչի օգնականի, դասավանդող ուսուցիչների և ծնողի հետ:<br><br>Կատարել դիտարկումներ բնականոն միջավայրում:<br><br>Հավաքագրել համապատասխան տեղեկատվություն՝ երեխայի կարողությունների, հետաքրքրությունների, դժվարությունների և այլի մասին:<br><br>Մասնակցել դիտարկման արդյունքների ուսումնասիրմանը և վերլուծությանը, ինչպես նաև «Երեխայի գործունեության գնահատման գործիքի» կիրառմանը:<br><br>Մասնակցել անհատական ուսուցման պլանի կազմման և մշակման աշխատանքներին:<br><br>Ապահովել սովորողին տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծավալները՝ շարունակական կապ պահպանելով սովորողի, ծնողի, առարկայական ուսուցիչների, հոգեբանի հետ: | սեպտեմբեր<br><br>տարվա ընթացքում |

| Պարտականություն | Խնդիրներ | Գործառույթ | Ժամկետ |
| --- | --- | --- | --- |
| Նպաստում է սովորողների նկատմամբ դպրոցի և ընտանիքի միասնական մանկավարժական պահանջների կատարման ապահովմանը: | Դպրոց-ընտանիք կապի ապահովում՝ միտված երեխայի որակյալ<br>կրթության ապահովմանը | Ծնողներին ներգրավել դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներին (բաց դասեր, արտադասարանական միջոցառումներ, դպրոցական և դասարանական աշխատանքներ):<br><br>Ծնողներին մասնակից դարձնել դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի կառավարմանը (մասնակցություն դպրոցում ձևավորված խորհուրդների աշխատանքներին):<br><br>Ապահովել ծնողների հոգեբանամանկավարժական տեղեկացվածությունը:<br><br>Կազմակերպել թեմատիկ անհատական խորհրդատվություններ, ծնողական ժողովներ՝ առարկայական ուսուցիչների մասնակցությամբ:<br><br>Ապահովել ծնողների մասնակցությունը դպրոցի համընդհանուր ծնողական ժողովներին: | տարվա ընթացքում<br><br>տարվա ընթացքում<br><br>տարվա ընթացքում<br><br>տարվա ընթացքում<br>կիսամյակի ընթացքում<br><br>տարվա ընթացքում |

| Պարտականություն | Խնդիրներ | Գործառույթ | Ժամկետ |
|---|---|---|---|
| Անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն: | Աշակերտների խնդիրների ուսումնասիրում ուսումնական գործընթացում | Կատարել դասալսումներ՝ պարզելու ինչով է պայմանավորված սովորողի առաջադիմության վատթարացումը:<br><br>Ուսուցիչների հետ քննարկել ուսման գործընթացում առաջացած խնդիրները:<br><br>Զրուցել աշակերտի, նրա ծնողի հետ բացահայտելու առաջադիմությանը խոչընդոտող գործոնները:<br><br>Սովորողների համար կազմակերպել լրացուցիչ պարապմունքներ, խորհրդատվություն՝ դասավանդող ուսուցիչների կողմից, դասընկերների օգնություն:<br><br>Կատարել վերլուծություն սովորողի ուսումնառության խնդիրների ուղղությամբ: | տարվա ընթացքում<br><br>տարվա ընթացքում<br><br>տարվա ընթացքում<br><br>տարվա ընթացքում<br><br>տարվա ընթացքում |

| Պարտականություն | Խնդիրներ | Գործառույթ | Ժամկետ |
|---|---|---|---|
| Իրականացնում է դասարանի համար նախատեսված գործավարությունը, էլեկտրոնային գրանցումները, դպրոցի տնօրենությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն: | Սահմանված գործավարության իրականացում | Ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանի կազմում<br><br>Հաճախումների մասին տեղեկատվության տրամադրում տնօրենությանը<br><br>Վարքի մասին տեղեկատվության տրամադրում տնօրենությանը<br><br>Աշակերտների առաջադիմության արդյունքների հաշվետվության կազմում<br><br>Ուսումնական տարվա դաստիարակչական աշխատանքների հաշվետվության կազմում<br><br>Աշակերտների անձնական գործերի լրացում | օգոստոս<br><br>ամեն օր ըստ անհրաժեշտության<br><br>1-ին և 2-րդ կիսամյակներ<br><br>1-ին և 2-րդ կիսամյակներ<br><br>1-ին և 2-րդ կիսամյակներ |

| Պարտականություն | Խնդիրներ | Գործառույթ | Ժամկետ |
|---|---|---|---|
| Կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ և այլ միջոցառումներ: | Աշակերտների ֆիզիկական և մտավոր առողջության պահպանում | Դասարանում ապահովել սանիտարահիգիենիկ պայմաններ: | ամեն օր |
| | | Ուսումնասիրել աշակերտների առողջական վիճակը՝ համագործակցելով դպրոցի բուժաշխատողի հետ: | սեպտեմբեր – հոկտեմբեր |
| | | Համագործակցել արտադպրոցական բժշկական հաստատության հետ՝ ապահովելու սովորողների տարեկան բուժզննումը: | տարվա ընթացքում |
| | | Ուսումնասիրել աշակերտների ծանրաբեռնվածությունն ուսման մեջ և նրա ազդեցությունը երեխայի առողջության վրա: | տարվա ընթացքում |
| | | Երեխաների մոտ ճիշտ վերաբերմունք ձևավորել ֆիզկուլտուրայի դասերի և սպորտային պարապմունքների նկատմամբ: | տարվա ընթացքում |
| | | Սովորողների մոտ ձևավորել առողջ ապրելակերպի մշակույթ՝ համագործակցելով դպրոցի բուժքրոջ, հոգեբանի, ֆիզկուլտուրայի ուսուցչի հետ: | տարվա ընթացքում |

| | | | |
|---|---|---|---|
| | | Կազմակերպել քննարկումներ սանիտարահիգիենիկ պահանջների, անձնական հիգիենայի նկատմամբ:<br><br>Բացատրել վնասակար սովորությունների ազդեցությունը մարդու առողջության վրա:<br><br>Զարգացնել արտակարգ իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու կարողություններ:<br><br>Մասնակցել դպրոցում կազմակերպվող ձմեռային խաղերին:<br><br>Կազմակերպել էքսկուրսիա/արշավ/ դեպի բնության գիրկ՝ համագործակցելով ծնողների հետ: | տարվա ընթացքում<br><br>հոկտեմբեր<br><br>դեկտեմբեր մարտ<br><br>հունվար – փետրվար<br><br>տարվա ընթացքում |

| Պարտականություն | Խնդիրներ | Գործառույթ | Ժամկետ |
| --- | --- | --- | --- |
| Դպրոցի մանկխորհրդի քննարկմանն է ներկայացնում սովորողին խրախուսանքի կամ կարգապահական տույժի ներկայացնելու հարցը: | Սովորողների խրախուսում կամ կարգապահական տույժ | Ըստ անհրաժեշտության՝ մանկխորհրդին ներկայացնել այն աշակերտներին, ովքեր արժանի են խրախուսվելու կամ ենթարկվելու կարգապահական տույժի: | |

| Աշխատանքի ուղղվածությունը | Խնդիրներ | Աշխատանքի բովանդակությունը | Գործողություն | Ժամկետ |
|---|---|---|---|---|
| Հոգևոր – բարոյական դաստիարակություն | Սովորողների բարոյական դաստիարակություն<br><br>հոգևոր աշխարհի զարգացում<br><br>սեր և հարգանք քրիստոնեական արժեքների նկատմամբ | Որոշակի պատկերացում տալ մարդկային տարբեր գործունեությունների, ազգային մշակույթի, ժողովրդական արժեքների, ծիսակատարությունների, տոների մասին: | զրույց<br><br>քննարկում<br><br>ֆիլմերի, ներկայացումների դիտում | սեպտեմբեր<br><br>հոկտեմբեր |
| Գեղագիտական դաստիարակություն | Մշակույթը կրող, ստեղծագործ անձի ձևավորում | Զարգացնել սովորողների գեղագիտական ճաշակը:<br><br>Սովորողներին ընդգրկել արտադասարանական խմբակներում: | զրույց արվեստի, մշակույթի շուրջ<br><br>այցելություն պատկերասրահ, ցուցահանդես, թանգարան<br><br>մասնակցություն միջոցառումներին | հոկտեմբեր<br><br>նոյեմբեր |
| Ռազմահայրենասիրական դաստիարակություն | Սիրո և հարգանքի սերմանում հայրենիքի հանդեպ, ակնածանք ազգային հերոսների նկատմամբ | Դաստիարակել բազմակողմանի զարգացած, հայրենասեր պատանիներ և աղջիկներ | ռազմահայրենասիրական միջոցառումներ<br>զրույց<br>հանդիպում | սեպտեմբեր<br>հունվար<br>մայիս |
| Բնապահպանական դաստիարակություն | Բնության և շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատու | Ձևավորել շրջակա միջավայրը չաղտոտելու, | ֆիլմի դիտում – քննարկում<br><br>զրույց | ապրիլ<br><br>մայիս |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | վերաբերմունքի ձևավորում | մաքրությունը պահպանելու հմտություններ։<br><br>Ձևավորել հոգատար վերաբերմունք բնության նկատմամբ։<br><br>Մասնակցել շրջակա միջավայրի մաքրման աշխատանքներին։ | շաբաթօրյակ<br><br>ծառատունկ | |
| Քաղաքացիական դաստիարակություն | Քաղաքացիական պատասխանատվության ձևավորում<br><br>Հարգանք իր երկրի մշակույթի և պատմության հանդեպ | Զարգացնել քաղաքացիական արժեքներ և բարոյական դիրքորոշում։<br><br>Ձևավորել մարդասիրական աշխարհայացք։<br><br>Ձևավորել առանձնահատուկ վերաբերմունք պետության, պետական խորհրդանիշների նկատմամբ։ | թեմատիկ դասղեկական ժամեր<br><br>այցելություն թանգարան, տեսարժան վայրեր | սեպտեմբեր |
| Իրավական դաստիարակություն | Իրավական գիտակցության ձևավորում | Ձևավորել դասարանական աշակերտական խորհուրդ<br><br>Սովորողներին զինել իրավունքի մասին գիտելիքներով։<br><br>Գիտակցել սեփական իրավունքները։ | Թեմատիկ դասղեկական ժամեր<br><br>պաստառի պատրաստում<br><br>արտադասարանական միջոցառումներ | սեպտեմբեր<br><br>նոյեմբեր |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Ձևավորել բարոյաիրավական հատկանիշներ։ | | |
| Աշխատանքային դաստիարակություն | Աշխատանքային հմտությունների խթանում | Ձևավորել կիրթ, ստեղծարար, նախաձեռնող և աշխատասեր անհատ։ | դասասենյակի սանիտարական վիճակի պահպանում<br><br>մասնակցություն բակի և դպրոցամերձ տարածքի մաքրման աշխատանքներին<br><br>դասասենյակի ամանորյա ձևավորում | տարվա ընթացքում<br><br>դեկտեմբեր |
| Ֆիզիկական դաստիարակություն | Վնասակար սովորությունների հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորում<br><br>Ֆիզիկական զարգացմանը ուղղված պայմանների ստեղծում | Հետևել աշակերտների ֆիզիկական զարգացմանը, առողջության պահպանմանը, համակողմանի զարգացմանը։<br><br>Ֆիզկուլտուրայի դասերի, սպորտային պարապմունքների նկատմամբ ձևավորել ճիշտ վերաբերմունք։ | մասնակցություն ձմեռային խաղերին<br><br>զրույց վնասակար սովորությունների, առողջ ապրելակերպի շուրջ | սեպտեմբեր<br><br>փետրվար<br><br>մարտ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Աշխատանք ծնողների հետ | Ծնողների ընդգրկումը կրթադաստիարակչական աշխատանքներում | Ծանոթանալ սովորողների ընտանիքների սոցիալական վիճակին։<br><br>Ուսումնասիրել սովորողների կենսակերպը։<br><br>Ծնողներին ներգրավել դասարանական և դպրոցական աշխատանքներում։ | սովորողների սոցիալական անձնագրի կազմում<br><br>զրույց<br><br>իրազեկում<br><br>անհատական խորհրդատվություն<br><br>ծնողական ժողովներ | սեպտեմբեր<br><br>սեպտեմբեր<br><br>տարվա ընթացքում |

| Ուսումնական շաբաթներ | Դասղեկական ժամերի թեմաները |
|---|---|
| 1. | Դաստիարակչական խորհրդի գործունեության մասին |
| 2. | Անկախության 32 տարիները |
| 3. | 44-օրյա պատերազմ. Հիշում ենք և խոնարհվում |
| 4. | Շնորհավոր տոնդ, Ուսուցի՛չ |
| 5. | Կարևորենք հիգիենան |
| 6. | Իմ նախասիրությունները և հետաքրքրությունները |
| 7. | Անվանի նկարիչներ /այցելություն պատկերասրահ/ |
| 8. | Կրկին իրավունքների և պարտականությունների մասին |
| 9. | Լինենք մեդիագրագետ |
| 10. | Ինքնաճանաչում |
| 11. | Ինչպե՞ս արդյունավետ տնօրինել ժամանակը |
| 12. | Բնական աղետներ. Լինենք իրազեկ և պաշտպանված |
| 13. | Վնասակար սովորությունները և դրանց հետևանքները |
| 14. | Ամանորի հրաշքի սպասումով |
| 15. | Հայկական ավանդույթներ |
| 16. | Ինքնաբացահայտում և ինքնարտահայտում |
| 17. | Հայաստանի պաշտպանները երեկ, այսօր և վաղը |
| 18. | Հանդուրժողականություն |
| 19. | Անհանդուրժողականության դրսևորումները |
| 20. | Ներողամտություն |
| 21. | Անաղարտ պահենք մեր մայրենի լեզուն՝ հայերենը |
| 22. | Մեր հույսի դուռն է մայրս |
| 23. | Ես քո զավակն եմ, Հայաստա՛ն |
| 24. | Հոգատար լինենք բնության նկատմամբ |
| 25. | Ես հայ եմ, քրիստոնյա |
| 26. | Իմ գրադարանը, իմ գրքերը |
| 27. | Սպորտն իմ կյանքում |
| 28. | Հայոց պատմության արյունոտ էջը. Մեծ եղեռն |
| 29. | Դպրոցական տարիների ուրախությունները և դժվարությունները |
| 30. | Ոչ ոք չի մոռացվել |

| | |
|---|---|
| 31<br>. | Երազանքներ և նպատակներ |
| 32<br>. | Ավարտական ղողանջներ |